

Նովոսելցովո

Մակերես՝ 8.96կմ²

Բնակչություն՝ 186

Տնային տնտեսությունների թիվը՝ 54:

Գյուղ Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 6 կմ հարավ, մարզկենտրոնից գտնվում է 52 կմ հեռավորության վրա: Գյուղը հիմնադրվել է 1913 թվականին Նովոսելցով ազգանունով մոլոկանի կողմից : Հետագայում գյուղը անվանել են Նովոսելցովո:

Բարձրությունը ծովի մակարդակից 1475 մետր: Կլիման բարեխառն է, ձմեռը երկարատև ու ցրտաշունչ, ամառը՝ զով: Գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 800,6 հա, որից՝ 124 հա վարելահող, 267,4հա խոտհարք, 266,1 հա արոտ: Գյուղի մասնագիտացման հիմնական ուղղությունը անասնապահությունն է: Արոտավայրերի և խոտհարքների ամկայությունը նպաստավոր է անասնապահության զարգացման համար:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են գազաֆիկացումը, խմելու ջրագծերի ներքին ցանցի վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքների իրացումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: